ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ ԳԱՆՁԱԿԻ ԹԵՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լեւոն վարդապետ Պսերյան (նաև Փսերյան - 1872-1927 թթ.)՝ հոգեւոր գործիչ, Գանձակի Հայոց վիճակի փոխանորդ (1918-1920 թթ.), 1921-ի հունիսից՝ Գանձակի Հայոց թեմի կառավարիչ:

Լեւոն վարդապետ Պսերյանն իր փոխանորդության շրջանում մի շարք զեկույցներով Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկացրել է Գանձակի վիճակի մասին:

Ստորեւ ներկայացվող զեկույցը վերաբերում է Գանձակի թեմի 1921 թ. անցուդարձերին:

Բնագիրը պահվում է Հայաստանի ազգային արխիվում (ֆ. 57, ց. 3, գ. 173, թթ. 6-11):

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ.Տ. ԳԷՈՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴԻՆ

ԳԱՆՁԱԿԻ ԹԵՄԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ
ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ

ԶԵԿՈՒՅՑՈՒՄ

Պատիւ ունեցել եմ զեկուցանելու Ձերդ Վեհափառութեան զանազան ժամանակներում՝ Հայ Եկեղեցու դրութեան մասին Ռուսական մեծամասնական իշխանութեան տիրապետութեան ներքոյ, Ադրբէջանում առանձին-առանձին յայտարարութիւններով եւ կազմել եմ յատուկ գործ 5-1920:

Զ՝երաշխաւորելով, որ այդ յայտարարութիւններն անկորուստ հասած լինեն Ձերդ Վեհափառութեան եւ, միւս կողմից, ցանկանալով Հայ Եկեղեցու այս շրջանի մասին մի ամփոփ գաղափար անելու, ես կարեւոր համարեցի այս զեկուցումը մատուցանելու Ձերդ Սրբութեան: Ռուսական մեծամասնական իշխանութիւնը եւ նորա քարոզութիւնները մտքերի, տրամադրութեան, աշխարհայացքների եւ հասկացողութիւնների բաշխումն առաջ բերին հայ հոգեւորականութեան եւ ժողովրդի մէջ:

Ինքնին հարց ծագեց թէ այժմ ինչ փոփոխութիւն պիտի պատահի կրօնական, եկեղեցական, ընդհանրապէս հոգեւոր հարցերի շուրջը, եւ այս քարոզութիւնների հանդէպ ինչ դիրք բռնելու է տեղական հոգեւոր իշխանութիւնը՝

կղզիացած և յարաբեւութեան պահպանութեան հնարաւորութիւնից բոլորովին զրկուած վիճակի մէջ Մայր Աթոռի հետ:

Ուղղակի պահանջ էր, որ հայ հոգեւորականութիւնը որոշէր այդ դիրքը, որպէսզի ժողովուրդը եւս համեմատ դորա յատուկ ուղղութեամբ սկսէր իւր վերաբերմունքը ցոյց տալ դէպի բոլոր հոգեւորը եւ կատարուող յեղաշրջումը:

Մեծամասնական քարոզութիւններն սկզբնական շրջանում, այն է 1920 թուի յունիսից սկսած, յատկապէս ուղղուեցին կրօնի, եկեղեցու և հոգեւորականութեան դէմ, առանց ազգի խտրութեան: Միայն այն տարբերութեամբ, որ հայերի մէջ այդ քարոզութիւնները տարւում էին անխնայ խստութեամբ:

Ռուս հոգեւորականութիւնը բոլորովին չէր երեւում. նա արդէն հեռացել էր գիւղերից կամ կոտորուել էր 1917-1918 թուերին, որը հետեւանք էր ռուսական գիւղերի աւերման, կռուի դաշտը լքող զօրքի կոտորուելուն Շամքոր եւ Գանձակ կայարաններում եւ սոցա արդիւնք ռուսական գաղթի քաղաքից եւ գիւղերից:

Մահմեդական հոգեւորականութիւնը, ի զարմանս թուրք հասարակութեան եւ թուրք բարձրաստիճան պետական անձանց, հեռացել էր ասպարէզից եւ ներգործական դեր չէր խաղում քաղաքական եւ հոգեւոր այս յեղաշրջումների հակամարտ հոսանքների մէջ: Մէջտեղում մնում էր մի ամփոփուած հոգեւոր դաս յանձին հայ եկեղեցականութեան, որը ե՛ւ իւր բազմութեամբ, ե՛ւ արտաքին երեւոյթով, դրսի եւ ներսի ծիսակատարութիւններով աչքի ընկաւ եւ «ուշադրութեան» արժանացաւ այն աստիճանի, որ նոյն իսկ արտակարգ կոմիսար մահմեդական Մ. Էֆէնդիեւն ինձ նկատեց մի պաշտօնական տեսութեան ժամանակ՝ ասելով. «Դուք գալիս եք մեզ մօտ, դիմումներ անում, հարցեր յարուցանում. հայ հոգեւորականութիւնը երեւում է. մահմեդական հոգեւորականութիւնը ուղղակի չի երեւում, կարծես թէ նա ստուերացել է, գոլորշիացել է»:

Եւ Գանձակի Հայոց հոգեւոր իշխանութիւնը հանդէս եկաւ եւ իւր դիրքը որոշեց, երբ այս նոր տեսակի եւ վտանգաւոր յեղաշրջման առաջին ալիքը դիպաւ եկեղեցական վանական կալուածներին եւ հրատարակեց նոցա գրաւման դեկրետը:

Այս առթիւ ես անձամբ տեսնուեցի 1920 թուի նոյեմբերին ժամանակի Ռեւկոմի նախագահ Մուսէիմ Ալիեւի հետ ու բացատրեցի հայ եկեղեցական-վանական կալուածների համազգային բնաւորութիւնը եւ խնդրեցի չառնել դրանք, որովհետեւ հետեւանքը անխուսափելիօրէն կլինի եկեղեցիների փակումը: Ապա, նորա ցուցման համեմատ, միեւնոյնը տուի նորան նաեւ գրաւոր աւելացնելով, որ այս առթիւ կառավարութիւնը բանակցելու է Ջերդ Վեհափառութեան հետ, որպէս վերին հսկողի այդ կալուածների եւ իբրեւ համայն հայոց ընտրեալ Հայրապետի: Միաժամանակ տեսնելով, որ կալուածները յանձնելու պահանջները զօրեղանում են եւ վտանգաւոր դրութիւն է ստեղծւում հոգեւորականութեանս,

երեսփոխանների եւ հոգաբարձութիւնների համար՝ ինչպէս 1903 թուին, ես խորհրդակցութեամբ իրաւաբանների մի բողոք ներկայացրի Բաքու՝ կոմիսարապէտ Ն. Նարիմանովին, չեշտելով եւ այն, որ կալուածների գրաւումը հակառակ է խղճի ազատութեան, որովհետեւ աղօթքի պաշտամունքը տանող եկեղեցական դասը կալուածների արդիւնքով ապրելու է: Այս դիմումը պատասխան չունեցաւ:

Երբ ինձ մօտ եկան կալուածները եւ նոցա վերաբերեալ գործերը յանձնելու պահանջով, ես մերժեցի տալ, առարկելով, որ իրաւունք չունեմ այդ անելու համաձայն եկեղեցական կանոնների, թէեւ պաշտօնական գրութեամբ սպառնալիք կար, որ, ի դէպ անհնազանդութեան, ես կմատնուիմ զինուորական-պատերազմական տրիբունալի դատին: Քաղաքի երկու եկեղեցիների կալուածները յանձնուեցին Ս. Յովհաննէս եկեղեցու 1917 թուին «յեղափոխական» ճանապարհով ընտրուած հոգաբարձութեան ձեռքով, որն առ այս նախապէս ստացել էր սպառնական եղանակով հրաւիրուած ծխական ժողովի հաւանութիւնը եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցու երեսփոխանի ձեռքով: Երուսաղէմինը եւ Էջմիածնինը յանձնել է կառավարիչ Մ. Տէր-Աւետիքեանցը: Թէ ինչեր են յանձնուած եւ ինչպիսի ձեւով, ես տեղեկութիւն չունեմ, միայն այսքանը տեսնում եմ, որ այդ կալուածները բոլորովին քանդուած են եւ շարունակում են աւերականալ հայոց եւ թուրքոց մասերում, եւ նոցա մօտի տարածութիւնները լեցուել են ամեն տեսակի ապականութիւններով:

Ս. Յովհաննէս Մայր եկեղեցու մօտի մեծ շէնքը սահմանակից տարածութեամբ ապականութեան օրինակ էր, որը քիչ շատ մաքրուեց եղած մի շարք դիմումներից յետոյ: Անշարժ կալուածների զուգընթաց հարց բարձրացաւ նաեւ եկեղեցական շարժական գոյքի յանձնման համար: Բացատրեցի, որ վերջինս առնել հաւասարազօր է եկեղեցիները փակելուն: Ապա պահանջ եղաւ գոնեա սոցա ցուցակը յանձնելու: Այս էլ չիրականացաւ: Այնպէս որ եկեղեցիների ներսը բոլորովին ազատ մնաց մինչեւ այսօր որեւէ վտանգից:

Դրութիւնը կոպիտ բնաւորութիւն ընդունեց գիւղերում, որտեղ դիմադիր ոյժը պակաս էր կամ թոյլ՝ շնորհիւ քահանաների տատանուող գործողութեան կամ ուղղակի հաճոյանալու նպատակով եւ երկիւղի տակ ցոյց տուած անգործութեան, որոնցից շատերը գիւղական ծառայութեան մէջ եւս մտել էին:

Որպէսզի հոգեւորականութիւնը չթուլանայ եւ եկեղեցին չլքուի, ես նոյն 1920 թուին մի շրջաբերական ուղղեցի քահանաներին. 1) Հայոց Եկեղեցու բոլոր կարգերը եւ կանոնները մնում են նոյնութեամբ, եւ նոքա անվթար կերպով պահպանուելու են եւ տարուելու քահանաների կողմից անաղարտ: Այս շրջաբերականի մի օրինակը բռնուել էր եւ տարուել Ռեւկոմի նախագահին: Կասկածելի էր համարուել նորա «օրէնք» եւ «հայ ժողովուրդ» խօսքերը, թէ «օրէնք» չէ,

այլ «կանոն», «հայ ժողովուրդ» խօսքերի տեղ պէտք է դրուէին «հայ հաւատացեալ»: Սակայն այս հանգամանքը առանց հետեւանքի մնաց. 2) Պատուիրեցի քահանաներին չմտնել աշխարհիկ ծառայութեան մէջ լքելով եկեղեցին, եւ այդ ծառայութեան մէջ եղողները դուրս գան: Այդպէս էլ եղաւ:

Կարեւոր ուշադրութեան արժանացան հայ եկեղեցիների շէնքերը գիւղերում. Թալիշի եկեղեցին վերածուեց մսի եւ այլ մթերքների պահեստատեղ եւ վաճառանոցի, Նոր Շէնինը՝ դպրոցի: Զարդախլուի եւ Գետաշէնի եկեղեցիներից տարուել էին վարագոյրներ եւ փռուածքներ ներկայացումների համար:

Կարգադրեցի, որ Թալիշի եկեղեցին դատարկուի այդ բաներից եւ Աստուածպաշտութիւնը վերսկսուի՝ ուղարկելով կողոպտուած Աւետարանը. Նոր Շէնի եկեղեցու համար ուղարկեցի պատկեր եւ պատուէր, որ դպրոցն այնտեղից հեռանայ: Ապա շրջագայութեանս ժամանակ յորդորեցի ժողովրդին չանել նման բաներ: Քահանան զեկուցանում է, որ այժմ այս եկեղեցին եւս մաքրուած է: Զարդախլուի եւ Գետաշէնի եկեղեցիներից տարուած բաները յետ բերուեցին:

Այս առթիւ խօսել եմ եւ կառավարութեան ներկայացուցիչների հետ եւ խնդրել կարգադրել, որ եկեղեցիներն ազատ մնան աշխարհական նպատակների համար ծառայեցնելուց, եւ այս դիմումս յարգուած է: Զուգընթաց սոցա, քաղաքի եկեղեցիներից ուղարկուեցին զգեստներ, սպասքներ կողոպտուած եկեղեցիների համար եւ հնարաւորութիւն տրուեց, որ Աստուածապաշտութիւնը կատարուի: Այս նպատակով դիմեցի եւ Թիֆլիզ, սակայն կոնսիստորիան պատասխանեց, որ Թիֆլիզի եկեղեցիները այժ չունեն այդ բաները տալու: Երկու քահանայացուներ առաջ քաշեցի եւ ձեռնադրել տուի Թիֆլիզում բոլորովին անքահանայ շրջանների համար: Այս հանգամանքն այժմ տարօրինակ է թւում:

Մտատանջող հանգամանք էր հոգեւոր հասոյթների գանձումը, որոնց մասին կարգադրուած էր դեռեւս 1920 թուի սկզբում, մինչեւ մեծամասնական զօրքի մուտքը: Այս գանձումից կամ չգանձումից կախուած էր փոխանորդութեանս գոյութեան հարցը: Այս մասին խօսեցի իշխանութեան ներկայացուցիչների հետ, որոնք սառն տրամադրութիւն ցոյց տուին: Կարիք եղաւ նորից կարգադրելու, որ այդ տուրքերը կամաւոր են եւ միայն հաւատացեալներից հաւաքուելու են: Բայց քահանաները դժուարացել էին որեւէ բան անելու: Ես սովորական այցելութիւնս կատարեցի եւ այդ 1920 թուի աշնանը ե՛ւ քարոզելով, ե՛ւ զուգընթաց այդ տուրքերը ժողովել տալով իմ ներկայութեամբ եւ մասնակցութեամբ, որոնք քաղաք բերուեցին իշխանութեան յատուկ թոյլտուութեամբ: Նոցա մի մասը գրաւուեց:

Այս այցելութիւնն արտասովոր երեւոյթ թւում էր այժմ ոչ միայն իշխանութեան աչքում, այլեւ ծիծաղելի «հայ» մարդկանց մօտ, որոնք ամբարտաւան կերպ էին ցոյց տալիս: Այնուամենայնիւ կատարեցի հովուական պարտքս, եւ

միաժամանակ հաւաքուեցին Մայր Աթոռի տուրքերը, որով եւ հնար եղաւ բոլորելու ժողովրդի մէջ յարգանք դէպի Եկեղեցին. ե՛ւ կրօնականը պահպանելու, ե՛ւ հոգեւոր տուրքերը գանձելու համար մեծ խթան էին եւ են իմ այցելութիւնները, որոնք մեծ մասամբ կատարւում էին ոտով. նոքա ունեցան եւ ունեն բարոյական ազդեցութիւն, թէեւ անձիս համար ոչ այնքան անվտանգ անցան, որովհետեւ ինձ ձերբակալելու փորձեր իսկ եղել են Ջիւանշիրի շրջանում, եւ գաղտնի հսկողութիւն եւս եղել է վերաս: Կրօնականը, հոգեւորը պահպանելու առթիւ յիշատակելու է նաեւ քաղաքի հայ հոգեւորականութեան անխափան օրինակատարութիւնները, մշտական ժամապաշտութիւնը, հոգեւոր հանդէսները Ծննդեան եւ Զատկական տօներին իմ հանդիսապետութեամբ, որոնք ժողովրդին տրամադրում էին մտածելու, որ այս արմատական յեղաշրջման ժամանակ Եկեղեցին հաստատուն մնայուն է, հոգեւորը անսասան է: Քաղաքի հոգեւորականութիւնը չ՝նկունացաւ, այլ դիմագրաւեց դրսից ու ներսից ստացուող հարուածներին, թէեւ նորա անդամներից ոմանք ենթարկուեցին բռնութեան եւ արհամարհանքի: Եւ քաղաքի հոգեւոր փառաւոր հանդէսները գտնում էին արձագանք ե՛ւ գիւղերում, ե՛ւ բարերար տպաւորութիւն թողնում՝ կրօնականը, եկեղեցականը պաշտպանելու տեսակէտից: Անձնապէս կրածս չարչարանքները աւելի զգալի դարձան 1920 թուի վերջերին բնակարանս եւ կահկարասիքները բռնութեամբ գրաւելու ժամանակ: Այսպէս, այս թուի աշնանը վիճակ դուրս գալուս ժամանակ կողպեցի ինձ համար մնացած երկու սենեակից մէկի դուռը եւ կնքեցի: Վերադառնալուցս յետոյ գտայ սենեակի դուռը [բաց] եւ կնիքը կոտրուած, սենեակը բռնուած ուրիշներից եւ մէջի ապրանքը թափուած հարեւան սենեակը, որից կային փշրուածներ: Այնուհետեւ բնակարանային վարչութիւնից ստացայ հրաման երկու օրուայ ընթացքում դատարկելու եւ այն միակ սենեակը խոհանոցի հետ, որոնք փոխարինում էին ննջարան, սեղանատուն, ծառայատուն, ընդունարան, դիւանատուն եւ այլն, հակառակ դէպքում սպառնում էր միլիցիայի ձեռքով դուրս անել: Միաժամանակ հրաման ստացայ յանձնելու եւ մի հատ գրասեղան: Խնդրեցի չառնել, սակայն լսեցի սպառնալիք, որ չտալու դէպքում պահակախմբի հսկողութեամբ կուղարկուեմ «յատուկ բաժանմունքը» եւ կսպանուեմ: Անտանելի տանջանքներով կարողացայ ե՛ւ սենեակին-խոհանոցին տէր մնալ, ե՛ւ ապրել նոցա մէջ, ե՛ւ թէ գրասեղանը պահել ձեռքիս:

Գրասեղանի առնելու ժամանակ եւ այս պատահեց, երբ ես առարկեցի եկողներին թէ վկայականիս զօրութեամբ հրաժարւում եմ գրասեղանը տալուց, նոքա ասացին, որ թքած այդ վկայականի վերայ: Պատասխանեցի, որ ես էլ իրենց թուղթը չեմ ընդունում: Եկողները վերջին նախադասութիւնը փոխել են եւ զեկուցել Ռեւկոմին, որ ես չեմ ճանաչում կառավարութիւնը: Երբ մի քանի օր անց եկայ Ռեւկոմի նախագահ Ալիեւի մօտ, լսեցի սորանից, որ նա դիմելու է Նարիմանովին եւ խնդրելու հրահանգ ինձ հետ վարուելու ձեւի մասին, որը չի

ճանաչում իշխանութիւնը: Երբ ես բացատրեցի եղելութիւնը, նա հասկացաւ հանգամանքը եւ այլեւս չդիմեց:

Մտածելով, որ գրասեղանի շուրջն ստեղծուած այս պարագան անփորձ չի անցնի ինձ համար, ես եղայ արտակարգ կոմիսար Էֆենդիեւի մօտ, բացատրեցի իմ անձիս դէմ սկսուած հալածողական քայլերը, որոնք սահմանափակում են իրաւունքներս՝ գիւղերն այցելելուս ժամանակ կասկածներ յարուցանելով դէմս եւ քաղաքում շշուկներ տարածելով. մինչեւ իսկ մի գրասեղան ունենալու իրաւունք անգամ չի տրւում: Խնդրեցի նորանից ընձեռել հնարաւորութիւն եւ մեկնելու Ս. Էջմիածին զեկուցանելու Ձերդ Վեհափառութեան իմ այս կացութիւնը: Էֆենդիեւը պատասխանեց. ինքը չի թոյլ տա, որ ես հեռանամ Ս. Էջմիածին այս պատճառներով. դա նախատինք է Ադրբէջանի իշխանութեան համար, որի սահմաններում կայ մի հայ հոգեւոր իշխանութիւն, որը այդքան զրկանքի է ենթակայ բնակարանի եւ գոյքի պատճառով: Ապա հեռախոսով կարգադրեց, որ ո՛չ գրասեղանը խլուի եւ ո՛չ էլ սենեակը խոհանոցի հետ գրաւուի եւ տուեց վկայականներ այս բովանդակութեամբ: Եթէ, աւելացրեց նա, որևէ նեղութիւն կտրուի ինձ այս կամ այն պատրուակով, անյապաղ յայտնեմ իրեն:

Սակայն քանի օրից յետոյ հայ մարդու ստորագրութիւնը կրող թուղթ ստացայ, բնակարանային բաժանմունքից, ինչպէս յիշեցի վերեւում, երկու օրուայ ընթացքում բնակարանը դատարկելու համար կամ հակառակ դէպքում միլիցիայի ձեռքով վտարուելու այնտեղից. վերստին դիմեցի Էֆենդիեւին, եւ սա ցասմամբ լի կշտամբանքներով յանդիմանեց այս հային եւ պատուիրեց չվստահանալ ձեռք տալու ինձ:

Ես նոյն Էֆենդիեւի միջոցով ժամադրութիւն եւս խնդրել էի Նարիմանովից, որը եկել էր Գանձակ, եւ որը տեսութեան ժամ եւս նշանակել էր, սակայն ես անկարող եղայ օգտուելու՝ վիճակ դուրս գալուս պատճառով: Բողոքիս առարկան լինելու էին ընդհանրապէս Հայ Եկեղեցու համար ստեղծուած անտանելի պայմանները եւ հայ հոգեւորականութեան իրաւազուրկ կացութիւնը Ադրբէջանի սահմաններում:

Տարաձայնութիւններ առաջ եկան եւ այս հարցերի շուրջը. ինչո՞ւ համար Եկեղեցին չի պսակում այն ամուսիններին, որոնք ստանում էին եկեղեցական պսակի քանդման եւ նոր պսակի համար հրաման քաղաքացիական կարգով. ինչո՞ւ քահանաները վկայականների համար առնում են տուրքեր, երբ տուրքերի սովորութիւնը վերացուած է խորհրդային իշխանութեան մէջ: Ստացուեց նաեւ գաւառական Ռեւկոմից պաշտօնական թուղթ, որ եթէ քահանաները եւ մոլլաները նման տուրքեր առնեն, կենթարկուեն զինուորական տրիբունալի դատին՝ դատուելու համար պատերազմական ժամանակի օրէնքներով. նոյն առթիւ գրութիւն եկաւ նաեւ սոցիալական ապահովութեան կոմիսիայից:

Նախ, ես գրաւոր կարգադրութիւն արի քահանաներին, որ տուրքերն ստանան կամաւորական չափերով եւ համեմատ ծխականների կարողութեան. ապա եղայ յիշեալ Էֆենդիեւի եւ գաւառական Ռեւկոմի նախագահ Իսմայիլովի մօտ, որոնց բացատրեցի, որ քահանաների ապրուստի աղբիւրներից մէկը կազմում են այս տուրքերը: Ցայտնեցի եւ ապահարզան ստացողների դիմումների մասին եկեղեցական կարգով պսակուելու համար, որը խախտում է Հայ Եկեղեցու սահմանադրական հոգին եւ նոցա մերժուելը: Նոքա պատասխանեցին, որ երբ այդպէս է, քահանաներն ըստ հնարաւորութեան ստանան վկայականների տուրքեր ունեւորներից եւ հայ հոգեւորներից, եւ հայ հոգեւորականութիւնը իրաւունք ունի չպսակելու աշխարհիկ եղանակով պսակի լուծումն ստացողներին, որոնք ոչ մի իրաւունք չունեն պահանջելու այդ բանը: Լսելով այս հաւաստիացումը՝ արի շրջաբերական կարգադրութիւն, որ նման պսակները անթոյլատրելի են, եւ արդէն կատարուածները համարւում են անվաւեր: Եղան քահանաներ, որոնք այնուամենայնիւ կատարեցին այսպիսի պսակներ, որոնց մասին զեկուցումներ արուած են թեմական Ատենի կողմից եւ խնդրուած հրահանգութիւն:

Հայ Եկեղեցու եւ հոգեւորականութեան դէմ ոտնձգութիւնները անօրինակ համարձակութեամբ սկսեց Բանանց գիւղի իսպօլկոմը եւ առաջ տարաւ գիւղական խորհուրդը Անանիա քահանայ Շիրակունու եւ տեղական երեսփոխանի հարցերի պատրուակով: Սակայն Գանձակի թեմական Ատեանը, սպառելով ներքին միջոցները Եկեղեցու իրաւունքները պաշտպանելու համար եւ չհասնելով հետեւանքի, հարկադրուած եղաւ դիմելու Գանձակի գաւառական իսպօլկոմին: Այս մասին եւ Ոսկանապատի տուրքերի շուրջն ստեղծուածի առթիւ յատուկ զեկուցումն արել եմ Ձերդ Վեհափառութեան «3» այս մարտի թ. 42:

Առաւելապէս նողկալի պատկեր ընդունեց ոմն անթլփատ սրտով հայի գլխաւորութեամբ մտածուած քարոզչութիւնը յօգուտ Ս. Էջմիածնի սկսուած հանգանակութեան դէմ: Նոյն իսկ չխնայուեցին բանսարկու լուրեր թէ ես երեքչորս հոգու հետ շրջում եմ գիշերները, ժողովներ անում այստեղ եւ այնտեղ եւ նման չաղփաղութիւններ:

Բանն այնտեղ հասաւ, որ քահանաներից ոմանք վախեցան փող ժողովելու, թէպէտ ես ամբողջ պատասխանատուութիւնը առել էի ինձ վերայ եւ տուել նոցա կտրօնաւոր մատեաններ:

Կարեւոր սեպեցի լինելու իսպօլկոմի նախագահի մօտ եւ խօսելու նորա հետ հոգեւորականութեան իրաւունքների մասին նման հանգանակութիւններ անելու եւ լսեցի նորա պատասխանը, որ Էջմիածինը ձերն է, եւ այն դուք պարտաւոր եք պահպանելու:

Այս ապահովութիւնն ստանալուց յետոյ, հանգանակութիւնը տարուեց աւելի վստահութեամբ եւ ստացուեց այնպիսի արդիւնք, որը համարելու է բաւա-

բար, ի նկատի ունենալով Գանձակի հայ հասարակութեան տնտեսական ծանր կացութիւնը եւ հակամարտ քարոզութիւնները:

Ձերդ Վեհափառութիւնը, ընդառաջ երթալով ժամանակի պահանջներին, բարեհաճեց ընդունել միջնորդութիւնս եւ Գանձակի փոխանորդութիւնը վերածեց թեմի 1921 թուի յունիսի 21-ի թ. 155 Սրբատառ հոգեւոր թեմական ատեանի:

1. Այս կարգադրութիւնն իւր բարի հետեւանքները տուեց հենց առաջին օրուանից նորանով, որ ամուսնալուծական գործերը կանոնաւոր ընթացք ստացան ի հաստատութիւն հայ համայնքների հոգեւոր կեանքի եւ ի խուսափումն ապօրինի կենակցութիւնների, որոնք մեծ ծաւալ էին ստացել:

2. Մասամբ հնարաւոր եղաւ հայ հաւատացեալներին պահելու պետական հասարակութիւններին դիմելուց այս հարցի համար, որը սովորութիւն կստանար ապագայում եւ ժողովուրդը կսառէր Եկեղեցուց եւ հայ հոգեւոր դասից:

Ըստ որում, թեմական Ատեանն ամենայն զգուշութեամբ կիրառում է այս իրաւունքը՝ բազմակողմանի քննութիւն անելով եւ վճիռներ ընդունելով: Ցանկանալով հոգեւոր-վարչականը վերահաստատել նաեւ Նուխու-Արէշի շրջաններում, ես կարգադրեցի, որ Նուխու հոգեւոր կառավարութիւնը վերսկսի իւր դադար առած գործողութիւնները, նշանակեցի կազմ, որը տանում է գործերը եւ պահպանում կապ թեմական իշխանութեանս հետ: Առաջին իսկ հնարաւորութեան անկանոնութեան պատճառով ես կայցելեմ Նուխի եւ նորա գիւղերի՝ ի մօտոյ անձամբ ծանօթանալու համար կացութեան եւ զեկուցանելու անկաւորը Ձերդ Սուրբ Օծութեան: Նկատելով, որ կեանքը նորանոր պահանջներ է առաջ բերում եւ կարիք կայ քահանաներին տալու հրահանգներ՝ թեմական Ատեանը, նախ, վերըստին յիշեցրեց ծայրագոյն Հոգեւոր իշխանութեան հին շրջաբերականները, որոնք իրենց պարտաւորական բնոյթը պահպանում են եւ այսօր վարչականին վերաբերեալ կողմով. երկրորդ, իւր կողմից եւս աւելացրեց առաջնորդող նոր կէտեր:

Ձերդ Վեհափառութիւնը կբարեհաճի դիտելու այս զեկուցումից, որ Գանձակի նախկին փոխանորդական եւ այժմուայ թեմական հոգեւոր իշխանութիւնները քահանայութեան հետ արել են այն, ինչ հնարաւոր է եղել, որպէսզի փրկեն Հայ Եկեղեցին այն վտանգից, որի հանդէպ նա կանգնած էր այս ըստ ամենայնի փոթորկալից շրջանում՝ սկսած տաճկական արշաւանքից ցայսօր ժամանակի, նախ, հաստատուն պահելով փոխանորդութիւնը եւ հոգեւոր կառավարութեան Ատեանը, այժմ Առաջնորդութիւնը եւ թեմական Ատեանը հայ ժողովրդից ստացուած աւանդական հասոյթներով եւ եկեղեցիների վերայ մասնադրուած օժանդակութիւններով, առանց դրսի որեւէ աջակցութեան եւ այս այն ժամանակ, երբ այլ հայաբնակ վայրերում հոգեւոր իշխանութիւնները դադարել էին գոյութիւ-

նից ակամայ կամ կամաւ. երկրորդ, անդադար քարոզելով Աստուծոյ խօսքը, յորդորելով ժողովրդին չվհատել, այլ յուսալ եւ պահպանել նախնեաց հաւատը, աւանդութիւնները, հաւատարիմ մնալով Հայ Քրիստոնէական Եկեղեցու դրոշակին:

Այժմ յետադարձ հայացք ձգելով աղետալի անցեալի վերայ, ես վստահութիւն ունեմ ասելու, որ անպիտան ծառաս արել եմ աննկուն սրտով այն, ինչ որ կարող էի անել եւ ինչ հնարաւոր է եղել: Հոգով եւ մարմնով վիճակից մնացել եմ իմ հովուութեան յանձնուած ժողովրդին՝ անբաժան ապրելով նորա հետ:

Եթէ Ձերդ Սրբութիւնը կնկատի պակասութիւններ, սխալմունքներ իմ գործողութիւնների մէջ, որոնք անշուշտ կան, դոքա համարուելու են անխուսափելի երեւոյթներ կրածս ժամանակի համար, երբ հայ ժողովուրդը կապոցները պատրաստած մտածում էր փախչելու մասին՝ իւր ֆիզիկական գոյութիւնը օրհասական կորստից ազատելու համար, սկսուած 1917 թուի վերջերից մինչեւ 1920 թուի կէսը եւ հէնց այսօր էլ:

Այս պակասութիւններից մէկն ինքս եւս խոստովանում եմ. այդ քահանաներից ոմանց ընդվզումները եւ կանոնազանց գործողութիւններն են եւ այլ անկարգութիւնները, մանաւանդ չհաս պսակների շուրջը, որոնց նկատմամբ չեմ օգտուել Ձերդ Սրբութեան Սրբատառ Կոնդակով ինձ շնորհուած իրաւունքից՝ զսպելով անսանձներին հարկաւոր չափով եւ պատժելով անուղղաներին՝ համաձայն կանոնական պահանջի, բայց այս չեմ արել ի նկատի ունենալով քաղաքական աննպաստ պայմանները եւ սպասելով մի քիչ ձեռնտու ժամանակի, երբ իւրաքանչիւր նման քահանայ չի ազատուի այն արդար հատուցումից, որը կախուած է այդպիսի քահանայի գլխին:

Այժմ անհամեմատ հանդուրժելի են քաղաքական պայմանները, մեղմացել են քարոզչական ձեւերը, հոգեւոր-բարոյականը վայելուչ պատկեր է ընդունում. ընդհանուր կեանքը լրջանում է եւ աստիճանաբար կանոնաւոր ընթացք ստանում: Հասել է վերագնահատութեան եւ հաշուետուութեան ժամը իւրաքանչիւրի համար, որից զերծ չեն մնայ Եկեղեցին շահագործող հոգեւոր սպասաւորները:

Հայցելով Ձերդ Սրբութեան օրհնութիւնը հայ հաւատացեալ հօտի վերայ եւ հանձնելով ինձ Հայրապետիդ աղօթքներին՝ եմ եւ մնամ ամենահնազանդ որդի:

Կառավարիչ թեմին Հայոց Գանձակի՝ ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ:

թ. 45
7 մարտի 1922 թ.
Գանձակ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 173, թթ. 6 - 11: Բնագիր: Ձեռագիր: